10934

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«29» 09 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 226 - 25

Նախաձեռնող՝ ***«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ***
ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2-րդ փակուղի 8 շենք, 41 ոչ բնակելի փարածք:

Գործունեությունը՝ ***Երևան, կենտրոն վարչական շրջանի Մ. Սարյան փողոց 22 շենք, 2 շինություն և Սարյան փողոց 22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդում (ապամոնտաժում)***
ք. Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 226 - 25

«29» 09 2025թ.

Երևանի Կենտրոն վարչական շրջանի Մ. Սարյան փողոց 22 շենք 2 շինություն և Սարյան փողոց 22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդման (ապամոնտաժման) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Նախատեսվող քանդման (ապամոնտաժման) աշխատանքները իրականացվելու է Երևանի Կենտրոն վարչական շրջանում Մ. Սարյան փողոց 22 շենք 2 շինություն և Սարյան փողոց 22 հասցեներում՝ 0.633272 հա հողամասում:

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի:

Նկարագրական մաս Սարյան 22 շենք 2 շինություն և Սարյան փողոց 22 հասցեներում ապամոնտաժման աշխատանքների իրականացման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով. ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529 - Ա որոշումը, քանդման աշխատանքների նախագծային փաստաթուղթը, համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները հողի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականները: 2024 թվականի օգոստոսի 28-ին տրված 01-006-0507-0001 կադաստրային ծածկագրով N28082024-01-0111 և 2024 թվականի օգոստոսի 27-ին տրված 01-006-0507-0001 կադաստրային ծածկագրով N27082024-01-0179 անշարժ գույքի

Գործունեության նպատակը Սարյան փողոց 22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժումն ու դրանց փոխարեն, համաշխարհային առևտրի կենտրոնի կառուցումն է: Քանդման (ապամոնտաժման) ենթակա են ընդհանուր 6 շինություն, որոնցից 1 մասնաշենքը բարձրահարկ է, մնացած 5-ը՝ երկհարկանի/եռահարկ:

Քանդման ենթակա մակերեսը 0.00 նիշում կազմում է 4696 մ²:

Ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու են հետևյալ հերթականությամբ.

- նախապատրաստական աշխատանքներ,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- 1-ին մասնաշենքի դռների, միջնորմերի, կախովի առաստաղների, ներքին ինժեներական ցանցերի և սարքավորումների, հատակային ծածկույթների, տանիքածածկույթի, տանիքի կոնստրուկցիաների, հարկերի տուֆե շարվածքի հիմնակմախքի և ծածկի սալերի տարրային քանդում և ապամոնտաժում,

-2-6-րդ մասնաշենքերի վերջին հարկերի ծածկերի սալերի ապամոնտաժում: Ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու է էքսկավատորով:

Շինհրապարակում տեղադրվելու է հակահրդեհային միջոցներով վահան, ցանկապատվելու է ժամանակավոր ցանցով:

Քանդման (ապամոնտաժման) ընթացքում առաջանալու են մի շարք թափոններ.

- շինարարական աղբ (ավազ, բետոն, քար, ապակի և այլն), 2500 տոննա ծավալով,
- յուղոտված լաթեր 15կգ,
- յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը - 15%-ից ցածր)՝ 5 կգ,
- կարծր տեսքով բիտումի և ասֆալտի թափոններ՝ 80 կգ,
- եռակցման աշխատանքների ժամանակ առաջանալու է եռակցման խարամ, կոշտ թափոնատեսակ՝ մոտ 25 կգ,
- թղթի և ստվարաթղթի տարատեսակ թափոններ (օրինակ՝ ֆոտոթուղթ պարունակող թափոններ՝ 30 մ^3,
- շինարարության փայտանյութի թափոններ, այդ թվում՝ շինությունների քանդելուց և մասնատելուց առաջացած՝ 50 տ,
- կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ 20 մ^3, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար 20 մ^3, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար 20 մ^3 և այլն:

Թափոնները տարածքից հեռացվելու են ամենօրյա գրաֆիկով:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածք, կենցաղային աղբի համար տեղադրվելու են 1x1,5 չափերի 2 մետաղական աղբաման:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, ինչի համար նախատեսված է 2 անիվների լվացման հարթակ՝ 4.1x4.24 մ:

Անիվների լվացումից առաջացած նստվածքը՝ ավազը, հեռացվելու է աղբավայր՝ որպես անվտանգ թափոն:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում օգտագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- աշտարակային վերամբարձ կռունկ WA7015, ZOOMLION կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով՝ 1 հատ,
- ավտովերամբարձ կռունկ KC-45717-1 կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով՝ 1 հատ,
- էքսկովատոր XCMG XE305D, JCB, JS 305, JCB 1CX կամ համարժեք տեխնիկական տվյալներով՝ 3 հատ,
- ավտոինքնաթափ (ըստ պահանջի),
- բեռնիչ BobcatS540 կամ համարժեք տեխնիկական տվյալներով՝ 2 հատ,
- քարերի հատիչ SPLINSTONE CS-3215 E կամ համարժեք տեխնիկական տվյալներով՝ 4 հատ,
- շարժական կոմպրեսոր Comp air C76 կամ համարժեք տեխնիկական տվյալներով՝ 3 հատ,
- հետահար մուրճ Makita HM 1812 կամ համարժեք տեխնիկական տվյալներով՝ 4 հատ,
- փոքր մեքենայացման միջոցներ՝ 10 հատ,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- ձեռքի էլեկտրական գործիքներ,
- ձեռքի մեխանիկական գործիքներ,
- ատաղձագործական գործիքներ,
- պաշտպանիչ արտահագուստ:

Աշխատողների կոմունալ–կենցաղային նպատակների և ջրցանի համար ջուրը մատակարարվելու է տարածքում գոյություն ունեցող ջրագծից՝ պայմանագրային հիմունքներով:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճատև և թույլատրելի նորմերի սահմաններում:

Քանդման (ապամոնտաժման) ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Աղմուկի, թրթռումների հիմնական աղբյուր կարող են հանդիսանալ ապամոնտաժման աշխատանքներն ապահովող շինտեխնիկան՝ մասնավորապես էքսկավատորը, որը կրելու է ժամանակավոր բնույթ: Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, ինչը նորմերի սահմաներում է: Աշխատանքներն իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

Քանդման (ապամոնտաժման) աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- քանդման (ապամոնտաժման) փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- ապամոնտաժման ենթակա տարածքը ցանկապատվելու է, քանդվող շենքերը կծածկվեն համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինաղբի և այլ նյութերի տեղափոխումն իրականցվելու է փակ ծածկով մեքենաներով,
-պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում,
- քանդման (ապամոնտաժման) ընթացքում ներգրավել աղմուկի առաջացման ժամանակ ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- բոլոր մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով,
- քանդման ընթացքում առաջացած շինարարական թափոնները և կենցաղային աղբը տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ հատուկ հատկացված վայր պայմանագրային հիմունքներով,
- ապամոնտաժման աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ իրականացվելու է ջրցան,
- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- քանդման արդյունքում առաջացած թափոնները տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին,
- մետաղական մասերն առանձնացվելու են և որպես մետաղի ջարդոն հանձնվելու են հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,
- բացառվելու է ապամոնտաժման ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ.

- իրականացվելու է փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում, ամենօրյա ռեժիմով,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի շինարարական հրապարակի ջրցանում՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար,
- հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում, ոչ ուշ երեք ամիսը մեկ անգամ,
-աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ պարբերաբար, երեք ամիսը մեկ անգամ,
-արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգություն մշտադիտարկումներ՝ պարբերաբար ամենօրյա ռեժիմով,

Ապամոնտաժման աշխատանքների ընթացքում բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմելու են 4.2 մլն << դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում նախատեսվող գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության, կադաստրի կոմիտեները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ

իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
5. Քանդման (ապամոնտաժման) աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
6. Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները ծածկել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով: Քանդման (ապամոնտաժման) շինարարական թափոնների տեղափոխումն իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Համաշխարհային առևտրի կենտրոն Երևան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևանի Կենտրոն վարչական շրջանի Մ. Սարյան փողոց 22 շենք 2 շինություն և Սարյան փողոց 22 հասցեներում գոյություն ունեցող շինությունների քանդման (ապամոնտաժման) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան